| 3   | արտադրական նշ. շին     | 32                                                   | 40.6%         | 45                         | -25.0%        | 60                           |
| 4   | հասարակական նշ. շին.   | 120                                                  | 30.0%         | 156                        | -46.2%        | 290                          |
| 5   | ավտոտնակ               | 70                                                   | 117.1%        | 152                        | -36.7%        | 240                          |
| 6   | հող                    | 563                                                  | 83.1%         | 1031                       | -42.1%        | 1780                         |
| 6ա  | ա/թ գյուղատնտ. նշ. հող | 375                                                  | 57.9%         | 592                        | -43.3%        | 1044                         |
|     | <b>Ընդամենը</b>        | <b>1651</b>                                          | <b>63.5%</b>  | <b>2699</b>                | <b>-41.1%</b> | <b>4580</b>                  |

### 3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

**3.2.1** Երևան քաղաքում 2018 թվականի հունվարին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 20.3%, իսկ առավել ցածրը՝ 0.6% Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 24-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

**Երևան քաղաքում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների**



Աղյուսակ 16-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի դեկտեմբեր և 2017 թվականի հունվար ամիսների նկատմամբ.


Աղյուսակ 16

| Վարչական շրջան   | 2017 թվականի հունվար | փոփոխումը    | 2018 թվականի հունվար | փոփոխումը     | 2017 թվականի դեկտեմբեր |
|------------------|----------------------|--------------|----------------------|---------------|------------------------|
| Դավթաշեն         | 26                   | 107.7%       | 54                   | -69.0%        | 174                    |
| Էրեբունի         | 53                   | 18.9%        | 63                   | -33.0%        | 94                     |
| Աջափնյակ         | 65                   | 127.7%       | 148                  | -1.3%         | 150                    |
| Ակն              | 42                   | 26.2%        | 53                   | -38.4%        | 86                     |
| Արաբկիր          | 108                  | 26.9%        | 137                  | -43.2%        | 241                    |
| Կենտրոն          | 108                  | 86.1%        | 201                  | -52.8%        | 426                    |
| Մալաթիա-Սեբաստիա | 79                   | 1.3%         | 80                   | -55.1%        | 178                    |
| Քանաքեռ-Զեյթուն  | 37                   | 81.1%        | 67                   | -40.7%        | 113                    |
| Շենգավիթ         | 61                   | 50.8%        | 92                   | -29.8%        | 131                    |
| Նոր-Նորք         | 69                   | 13.0%        | 78                   | -58.5%        | 188                    |
| Նորք-Մարաշ       | 6                    | 50.0%        | 9                    | 12.5%         | 8                      |
| Նուբարաշեն       | 6                    | 0.0%         | 6                    | 20.0%         | 5                      |
| <b>Երևան</b>     | <b>660</b>           | <b>49.7%</b> | <b>988</b>           | <b>-44.9%</b> | <b>1794</b>            |

**3.2.2** Երևան քաղաքում 2018 թվականի հունվարին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 62.1% գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.3% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 25-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 25



Աղյուսակ 17-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի դեկտեմբեր և 2017 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 17


| Հ/Հ             | Գույքի տեսակ           | Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները |              |                      |               |                        |
|-----------------|------------------------|--------------------------------------------------------------|--------------|----------------------|---------------|------------------------|
|                 |                        | 2017 թվականի հունվար                                         | փոփոխումը    | 2018 թվականի հունվար | փոփոխումը     | 2017 թվականի դեկտեմբեր |
| 1               | բնակարան               | 411                                                          | 49.4%        | 614                  | -47.9%        | 1178                   |
| 2               | անհատական բնակելի տուն | 79                                                           | 2.5%         | 81                   | -47.1%        | 153                    |
| 3               | արտադրական նշ. շին     | 6                                                            | 116.7%       | 13                   | -7.1%         | 14                     |
| 4               | հասարակական նշ. շին.   | 73                                                           | 28.8%        | 94                   | -50.3%        | 189                    |
| 5               | ավտոտնակ               | 57                                                           | 101.8%       | 115                  | -24.3%        | 152                    |
| 6               | հող                    | 34                                                           | 108.8%       | 71                   | -34.3%        | 108                    |
| 6ա              | ա/թ գյուղատնտ. նշ. հող | 1                                                            | 300.0%       | 4                    | -42.9%        | 7                      |
| <b>Ընդամենը</b> |                        | <b>660</b>                                                   | <b>49.7%</b> | <b>988</b>           | <b>-44.9%</b> | <b>1794</b>            |

### 3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2018 թվականի հունվարին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 56.1% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.9% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 26-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 26



Աղյուսակ 18-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի դեկտեմբեր և 2017 թվականի հունվար ամիսների նկատմամբ.

| Հ/Հ             | Գույքի տեսակ           | Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները |               |                      |               |                        |
|-----------------|------------------------|---------------------------------------------------------|---------------|----------------------|---------------|------------------------|
|                 |                        | 2017 թվականի հունվար                                    | փոփոխում<br>ը | 2018 թվականի հունվար | փոփոխում<br>ը | 2017 թվականի դեկտեմբեր |
| 1               | բնակարան               | 192                                                     | 64.6%         | 316                  | -33.6%        | 476                    |
| 2               | անհատական բնակելի տուն | 184                                                     | 65.2%         | 304                  | -24.6%        | 403                    |
| 3               | արտադրական նշ. շին     | 26                                                      | 23.1%         | 32                   | -30.4%        | 46                     |
| 4               | հասարակական նշ. շին.   | 47                                                      | 31.9%         | 62                   | -38.6%        | 101                    |
| 5               | ավտոտնակ               | 13                                                      | 184.6%        | 37                   | -58.0%        | 88                     |
| 6               | հող                    | 529                                                     | 81.5%         | 960                  | -42.6%        | 1672                   |
| 6ա              | ա/թ գյուղատնտ. նշ. հող | 374                                                     | 57.2%         | 588                  | -43.3%        | 1037                   |
| <b>Ընդամենը</b> |                        | <b>991</b>                                              | <b>72.7%</b>  | <b>1711</b>          | <b>-38.6%</b> | <b>2786</b>            |


### 3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2018 թվականի հունվարին անշարժ գույքի 517 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 19.2%-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 133-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 267-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 117 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք :

Գծապատկեր 27-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2018 թվականի հունվարին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները .

### Իրավաբանական անձանց կողմից կատարված առուվաճառքի գործարքներ




Արդյունքում 2018 թվականի հունվարին իրավաբանական անձինք գնել են 250 միավոր անշարժ գույք և վաճառել են 384 միավոր անշարժ գույք:


Գծապատկեր 28-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2018 թվականի հունվարին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 29-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների .

Գծապատկեր 28

### Իրավաբանական անձանց կողմից գնված գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



### Իրավաբանական անձանց կողմից վաճառված գույքերի բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 19-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը Հանրապետությունում գրանցված առուվաճառների գործարքներում՝ ըստ Երևանի և մարզերի:

Աղյուսակ 19

|                 | Առուվաճառքի գործարքների քանակ | Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք |        |                                        | Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք |        |                                        |
|-----------------|-------------------------------|-----------------------------------------------|--------|----------------------------------------|--------------------------------------------------|--------|----------------------------------------|
|                 |                               | քանակ                                         | %      | Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում | քանակ                                            | %      | Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում |
| Երևան           | 988                           | 123                                           | 49.2%  | 12.4%                                  | 266                                              | 69.3%  | 26.9%                                  |
| Արագածոտն       | 157                           | 15                                            | 6.0%   | 9.6%                                   | 9                                                | 2.3%   | 5.7%                                   |
| Արարատ          | 277                           | 7                                             | 2.8%   | 2.5%                                   | 14                                               | 3.6%   | 5.1%                                   |
| Արմավիր         | 255                           | 1                                             | 0.4%   | 0.4%                                   | 9                                                | 2.3%   | 3.5%                                   |
| Գեղարքունիք     | 200                           | 17                                            | 6.8%   | 8.5%                                   | 19                                               | 4.9%   | 9.5%                                   |
| Լոռի            | 136                           | 13                                            | 5.2%   | 9.6%                                   | 17                                               | 4.4%   | 12.5%                                  |
| Կոտայք          | 289                           | 12                                            | 4.8%   | 4.2%                                   | 19                                               | 4.9%   | 6.6%                                   |
| Շիրակ           | 152                           | 5                                             | 2.0%   | 3.3%                                   | 17                                               | 4.4%   | 11.2%                                  |
| Սյունիք         | 108                           | 13                                            | 5.2%   | 12.0%                                  | 9                                                | 2.3%   | 8.3%                                   |
| Վայոց ձոր       | 28                            | 2                                             | 0.8%   | 7.1%                                   | 2                                                | 0.5%   | 7.1%                                   |
| Տավուշ          | 109                           | 42                                            | 16.8%  | 38.5%                                  | 3                                                | 0.8%   | 2.8%                                   |
| Հանրապետություն | 2699                          | 250                                           | 100.0% | 9.3%                                   | 384                                              | 100.0% | 14.2%                                  |

Աղյուսակ 20-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը Հանրապետությունում գրանցված առուվաճառների գործարքներում՝ ըստ գույքի տեսակների:

|          | Գույքի տեսակ           | Առուվաճառքի գործարքների քանակ | Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք |        |                                        | Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք |        |                                        |
|----------|------------------------|-------------------------------|-----------------------------------------------|--------|----------------------------------------|--------------------------------------------------|--------|----------------------------------------|
|          |                        |                               | քանակ                                         | %      | Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում | քանակ                                            | %      | Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում |
| 1        | բնակարան               | 930                           | 70                                            | 28.0%  | 7.5%                                   | 91                                               | 34.1%  | 9.8%                                   |
| 2        | անհատական բնակելի տուն | 385                           | 23                                            | 9.2%   | 6.0%                                   | 28                                               | 10.5%  | 7.3%                                   |
| 3        | արտադրական նշ. շին     | 45                            | 15                                            | 6.0%   | 33.3%                                  | 15                                               | 5.6%   | 33.3%                                  |
| 4        | հասարակական նշ. շին.   | 156                           | 27                                            | 10.8%  | 17.3%                                  | 52                                               | 19.5%  | 33.3%                                  |
| 5        | ավտոտնակ               | 152                           | 21                                            | 8.4%   | 13.8%                                  | 65                                               | 24.3%  | 42.8%                                  |
| 6        | հող                    | 1031                          | 94                                            | 37.6%  | 9.1%                                   | 16                                               | 6.0%   | 1.6%                                   |
| 6ա       | ա/թ գյուղատնտ. նշ. հող | 592                           | 59                                            | 23.6%  | 10.0%                                  | 12                                               | 4.5%   | 2.0%                                   |
| Ընդամենը |                        | 2699                          | 250                                           | 100.0% | 9.3%                                   | 267                                              | 100.0% | 9.9%                                   |


### 3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2018 թվականի հունվարին անշարժ գույքի 276 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 10.7%-ը:

Առուվաճառքի գործարքներից 73-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 196-ի դեպքում միայն վաճառող, իսկ 7 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ:


Գծապատկեր 30-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի հունվարին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը.

Գծապատկեր 30




Գծապատկեր 31-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2018 թվականի հունվարին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 32-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների .

Գծապատկեր 31



Գծապատկեր 32



Աղյուսակ 21-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառների գործարքներում՝ ըստ Երևանի և մարզերի.

Աղյուսակ 21

|                 | Առուվաճառքի<br>գործարքների<br>քանակ | Օտարերկրյա քաղաքացիների<br>կողմից գնված անշարժ գույք |        |                                                 | Օտարերկրյա քաղաքացիների<br>կողմից վաճառված անշարժ գույք |        |                                                 |
|-----------------|-------------------------------------|------------------------------------------------------|--------|-------------------------------------------------|---------------------------------------------------------|--------|-------------------------------------------------|
|                 |                                     | քանակ                                                | %      | Տեսակարար<br>կշիռը<br>նմանատիպ<br>գործարքներում | քանակ                                                   | %      | Տեսակարար<br>կշիռը<br>նմանատիպ<br>գործարքներում |
| Երևան           | 988                                 | 56                                                   | 70.0%  | 5.7%                                            | 65                                                      | 32.0%  | 6.6%                                            |
| Արագածոտն       | 157                                 | 2                                                    | 2.5%   | 1.3%                                            | 16                                                      | 7.9%   | 10.2%                                           |
| Արարատ          | 277                                 | 1                                                    | 1.3%   | 0.4%                                            | 24                                                      | 11.8%  | 8.7%                                            |
| Արմավիր         | 255                                 | 2                                                    | 2.5%   | 0.8%                                            | 35                                                      | 17.2%  | 13.7%                                           |
| Գեղարքունիք     | 200                                 | 2                                                    | 2.5%   | 1.0%                                            | 7                                                       | 3.4%   | 3.5%                                            |
| Լոռի            | 136                                 | 1                                                    | 1.3%   | 0.7%                                            | 11                                                      | 5.4%   | 8.1%                                            |
| Կոտայք          | 289                                 | 8                                                    | 10.0%  | 2.8%                                            | 15                                                      | 7.4%   | 5.2%                                            |
| Շիրակ           | 152                                 | 4                                                    | 5.0%   | 2.6%                                            | 9                                                       | 4.4%   | 5.9%                                            |
| Սյունիք         | 108                                 | 1                                                    | 1.3%   | 0.9%                                            | 11                                                      | 5.4%   | 10.2%                                           |
| Վայոց Ձոր       | 28                                  | 0                                                    | 0.0%   | 0.0%                                            | 1                                                       | 0.5%   | 3.6%                                            |
| Տավուշ          | 109                                 | 3                                                    | 3.8%   | 2.8%                                            | 9                                                       | 4.4%   | 8.3%                                            |
| Հանրապետություն | 2699                                | 80                                                   | 100.0% | 3.0%                                            | 203                                                     | 100.0% | 7.5%                                            |

Աղյուսակ 22-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը Հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում՝ ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 22

|    |                           | Առուվաճառքի<br>գործարքների<br>քանակ | Օտարերկրյա քաղաքացիների<br>կողմից գնված անշարժ գույք |        |                                                 | Օտարերկրյա քաղաքացիների<br>կողմից վաճառված անշարժ գույք |        |                                                 |
|----|---------------------------|-------------------------------------|------------------------------------------------------|--------|-------------------------------------------------|---------------------------------------------------------|--------|-------------------------------------------------|
|    |                           |                                     | քանակ                                                | %      | Տեսակարար<br>կշիռը<br>նմանատիպ<br>գործարքներում | քանակ                                                   | %      | Տեսակարար<br>կշիռը<br>նմանատիպ<br>գործարքներում |
| 1  | բնակարան                  | 930                                 | 46                                                   | 57.5%  | 4.9%                                            | 105                                                     | 51.7%  | 11.3%                                           |
| 2  | անհատական<br>բնակելի տուն | 385                                 | 13                                                   | 16.3%  | 3.4%                                            | 44                                                      | 21.7%  | 11.4%                                           |
| 3  | արտադրական նշ.<br>շին     | 45                                  | 0                                                    | 0.0%   | 0.0%                                            | 0                                                       | 0.0%   | 0.0%                                            |
| 4  | հասարակական նշ.<br>շին.   | 156                                 | 5                                                    | 6.3%   | 3.2%                                            | 6                                                       | 3.0%   | 3.8%                                            |
| 5  | ավտոտնակ                  | 152                                 | 10                                                   | 12.5%  | 6.6%                                            | 4                                                       | 2.0%   | 2.6%                                            |
| 6  | հող                       | 1031                                | 6                                                    | 7.5%   | 0.6%                                            | 44                                                      | 21.7%  | 4.3%                                            |
| 6ա | ա/թ գյուղատնտ. նշ.<br>հող | 592                                 | 0                                                    | 0.0%   | 0.0%                                            | 29                                                      | 14.3%  | 4.9%                                            |
|    | Ընդամենը                  | 2699                                | 80                                                   | 100.0% | 3.0%                                            | 203                                                     | 100.0% | 7.5%                                            |

Աղյուսակ 23-ում ներկայացված են 2018 թվականի հունվարին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 24-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 23

| h/h | Պետության անվանումը                | Բնակարան | Բնակելի տուն | Արտադ. նշ. շին. | Հասար. նշ. շին. | Ավտոտնակ | Հող | ա/թ գյուղ. նշ | Ընդամենը |
|-----|------------------------------------|----------|--------------|-----------------|-----------------|----------|-----|---------------|----------|
| 1   | Ռուսաստանի Դաշնություն             | 26       | 7            | 0               | 2               | 5        | 4   | 0             | 44       |
| 2   | ԱՄՆ                                | 3        | 3            | 0               | 0               | 1        | 0   | 0             | 7        |
| 3   | Իրան                               | 9        | 0            | 0               | 1               | 2        | 0   | 0             | 12       |
| 4   | Սիրիա                              | 2        | 0            | 0               | 0               | 0        | 0   | 0             | 2        |
| 5   | Եվրոպական պետություններ            | 1        | 0            | 0               | 1               | 0        | 0   | 0             | 2        |
| 6   | ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ | 3        | 2            | 0               | 1               | 1        | 1   | 0             | 8        |
| 7   | Այլ պետություններ                  | 2        | 1            | 0               | 0               | 1        | 1   | 0             | 5        |
|     | ԸՆԴԱՄԵՆԸ                           | 46       | 13           | 0               | 5               | 10       | 6   | 0             | 80       |


Աղյուսակ 24

| h/h | Պետության անվանումը                | Բնակարան | Բնակելի տուն | Արտադ. նշ. օբյ. | Հասար. նշ. օբյ. | Ավտոտնակ | Հող | ա/թ գյուղ. նշ | Ընդամենը |
|-----|------------------------------------|----------|--------------|-----------------|-----------------|----------|-----|---------------|----------|
| 1   | Ռուսաստանի Դաշնություն             | 80       | 39           | 0               | 6               | 2        | 42  | 29            | 169      |
| 2   | ԱՄՆ                                | 8        | 3            | 0               | 0               | 0        | 0   | 0             | 11       |
| 3   | Իրան                               | 2        | 0            | 0               | 0               | 1        | 1   | 0             | 4        |
| 4   | Սիրիա                              | 0        | 0            | 0               | 0               | 0        | 0   | 0             | 0        |
| 5   | Եվրոպական պետություններ            | 8        | 1            | 0               | 0               | 0        | 0   | 0             | 9        |
| 6   | ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ | 5        | 0            | 0               | 0               | 1        | 1   | 1             | 7        |
| 7   | Այլ պետություններ                  | 2        | 1            | 0               | 0               | 0        | 0   | 0             | 3        |
|     | ԸՆԴԱՄԵՆԸ                           | 105      | 44           | 0               | 6               | 4        | 44  | 30            | 203      |

### 3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2018 թվականի հունվարին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 930 գործարք : 2018 թվականի հունվարին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 43.8%-ով, 2017 թվականի հունվարի համեմատ աճել՝ 51.4%-ով

Գծապատկեր 33-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.



Աղյուսակ 25-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի դեկտեմբեր և 2017 թվականի հունվար ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 25


|                 | 2017<br>թվականի<br>հունվար | փոփոխումը | 2018<br>թվականի<br>հունվար | փոփոխումը | 2017 թվականի<br>դեկտեմբեր |
|-----------------|----------------------------|-----------|----------------------------|-----------|---------------------------|
| Երևան           | 411                        | 49.4%     | 614                        | -47.9%    | 1178                      |
| Արագածոտն       | 2                          | 300.0%    | 8                          | -27.3%    | 11                        |
| Արարատ          | 16                         | 18.8%     | 19                         | -58.7%    | 46                        |
| Արմավիր         | 15                         | 133.3%    | 35                         | -7.9%     | 38                        |
| Գեղարքունիք     | 15                         | 66.7%     | 25                         | -26.5%    | 34                        |
| Լոռի            | 45                         | 28.9%     | 58                         | -42.0%    | 100                       |
| Կոտայք          | 49                         | 46.9%     | 72                         | -40.5%    | 121                       |
| Շիրակ           | 24                         | 83.3%     | 44                         | -25.4%    | 59                        |
| Սյունիք         | 10                         | 290.0%    | 39                         | 11.4%     | 35                        |
| Վայոց Ձոր       | 4                          | 75.0%     | 7                          | -46.2%    | 13                        |
| Տավուշ          | 12                         | -25.0%    | 9                          | -52.6%    | 19                        |
| Հանրապետություն | 603                        | 54.2%     | 930                        | -43.8%    | 1654                      |

**3.6.2** Երևան քաղաքում 2018 թվականի հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ իրականացվել է 988 առուվաճառքի գործարք, 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 47.9%-ով, իսկ 2017 թվականի հունվարի համեմատ աճել՝ 49.4%-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 12.3%, իսկ առավել ցածրը 0.3% Նուբարաշեն վարչական շրջաններում : Նորք-Մարաշ վարչական շրջանում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքներ չեն գրանցվել:

Գծապատկեր 34-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 34



Աղյուսակ 26-ում ներկայացված են 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

| Վարչական շրջան                | 2017<br>թվականի<br>հունվար | փոփոխումը | 2018<br>թվականի<br>հունվար | փոփոխումը | 2017<br>թվականի<br>դեկտեմբեր |
|-------------------------------|----------------------------|-----------|----------------------------|-----------|------------------------------|
| <b>Կենտրոն միջին</b>          | 428250                     | 13.3%     | 485000                     | 4.2%      | 465500                       |
| Կենտրոն 1գոտի                 |                            | N/A       | 620000                     | N/A       |                              |
| Կենտրոն 2 գոտի                |                            | N/A       | 480500                     | N/A       |                              |
| Կենտրոն 3 գոտի                |                            | N/A       | 440200                     | N/A       |                              |
| Կենտրոն 4 գոտի                |                            | N/A       | N/A                        | N/A       |                              |
| Կենտրոն 5 գոտի                |                            | N/A       | 340000                     | N/A       |                              |
| <b>Արաբկիր միջին</b>          | 357450                     | 0.4%      | 358800                     | 2.5%      | 350100                       |
| Արաբկիր 3գոտի                 |                            | N/A       | 425000                     | N/A       |                              |
| Արաբկիր 4գոտի                 |                            | N/A       | 370000                     | N/A       |                              |
| Արաբկիր 5գոտի                 |                            | N/A       | 331000                     | N/A       |                              |
| Արաբկիր 6գոտի                 |                            | N/A       | 223000                     | N/A       |                              |
| <b>Քանաքեռ-Զեյթուն միջին</b>  | 281000                     | -4.0%     | 269700                     | 0.9%      | 267400                       |
| Քանաքեռ-Զեյթուն 4գոտի         |                            | N/A       | 330000                     | N/A       |                              |
| Քանաքեռ-Զեյթուն 5գոտի         |                            | N/A       | 320000                     | N/A       |                              |
| Քանաքեռ-Զեյթուն 6գոտի         |                            | N/A       | 281000                     | N/A       |                              |
| Քանաքեռ-Զեյթուն 7գոտի         |                            | N/A       | 210000                     | N/A       |                              |
| <b>Նոր-Նորք միջին</b>         | 254500                     | -6.9%     | 237050                     | 1.1%      | 234500                       |
| Նոր-Նորք 6 գոտի               |                            | N/A       | 260500                     | N/A       |                              |
| Նոր-Նորք 7 գոտի               |                            | N/A       | 215000                     | N/A       |                              |
| <b>Էրեբունի միջին</b>         | 249800                     | -3.9%     | 240000                     | 0.5%      | 238800                       |
| Էրեբունի 5 գոտի               |                            | N/A       | 290000                     | N/A       |                              |
| Էրեբունի 6 գոտի               |                            | N/A       | 252000                     | N/A       |                              |
| Էրեբունի 7 գոտի               |                            | N/A       | N/A                        | N/A       |                              |
| Էրեբունի 8 գոտի               |                            | N/A       | 190000                     | N/A       |                              |
| <b>Շենգավիթ միջին</b>         | 256500                     | -3.0%     | 248700                     | 1.5%      | 245100                       |
| Շենգավիթ 5 գոտի               |                            | N/A       | 270800                     | N/A       |                              |
| Շենգավիթ 6 գոտի               |                            | N/A       | 260000                     | N/A       |                              |
| Շենգավիթ 7 գոտի               |                            | N/A       | 234000                     | N/A       |                              |
| Շենգավիթ 8 գոտի               |                            | N/A       | 180000                     | N/A       |                              |
| <b>Դավթաշեն միջին</b>         | 277300                     | -2.5%     | 270500                     | 3.7%      | 260800                       |
| Դավթաշեն 7 գոտի               |                            | N/A       | 270500                     | N/A       |                              |
| <b>Աջափնյակ միջին</b>         | 250000                     | -5.5%     | 236200                     | 1.8%      | 232000                       |
| Աջափնյակ 4 գոտի               |                            | N/A       | 260000                     | N/A       |                              |
| Աջափնյակ 6 գոտի               |                            | N/A       | 275000                     | N/A       |                              |
| Աջափնյակ 7 գոտի               |                            | N/A       | 220000                     | N/A       |                              |
| Աջափնյակ 8 գոտի               |                            | N/A       | 225000                     | N/A       |                              |
| <b>Մալաթիա-Սեբաստիա միջին</b> | 242500                     | -2.9%     | 235500                     | 0.0%      | 235500                       |
| Մալաթիա –Սեբաստիա 6 գոտի      |                            | N/A       | 288000                     | N/A       |                              |
| Մալաթիա –Սեբաստիա 7 գոտի      |                            | N/A       | 235000                     | N/A       |                              |
| Մալաթիա –Սեբաստիա 8 գոտի      |                            | N/A       | 190000                     | N/A       |                              |
| <b>Ավան միջին</b>             | 261000                     | -4.0%     | 250500                     | 0.3%      | 249700                       |
| Ավան 6 գոտի                   |                            | N/A       | 205000                     | N/A       |                              |
| Ավան 7 գոտի                   |                            | N/A       | 252000                     | N/A       |                              |
| <b>Նուբարաշեն միջին</b>       | 157700                     | -1.5%     | 155300                     | -2.7%     | 159600                       |
| Նուբարաշեն 9                  |                            | N/A       | 155300                     | N/A       |                              |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի հունվարին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի դեկտեմբերի համեմատ՝ աճել են 1.6%-ով, իսկ 2017 թվականի հունվարի համեմատ՝ նվազել 0.9%-ով:

#### **Ծանոթություն**

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 17.04.2003թ. N470-Ն որոշմամբ հաստատված տարածազնահատման գոտիների:

\*Մալաթիա-Սեբաստիա համայնքի 6-րդ գոտում ընդգրկված է Ծիծեռնակաբերդի խճուղին

\*Ավան համայնքի 7-րդ գոտում ընդգրկված է Ծարավ Աղբյուրի փողոցը

\*Աջափնյակ համայնքի 8-րդ գոտում ընդգրկված է Վահագնի թաղամասը

Վերոնշյալ փողոցներն ու թաղամասերն էական ազդեցություն են թողնում տվյալ գոտում ձևավորվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական գների վրա:


\*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

**3.6.3** 2018 թվականի հունվարին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 316 բնակարան, ընդ որում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 8.2%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի հունվարին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի դեկտեմբերի համեմատ նվազել է 33.6 %-ով, իսկ 2017 թվականի հունվարի համեմատ աճել՝ 64.6 %-ով:

Գծապատկեր 35-ում ներկայացված է 2018 թվականի հունվարին մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 35



Աղյուսակ 27-ում ներկայացված են 2018 թվականի հունվարին մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված

բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Աղյուսակ 27

| Մարզը       | Քաղաքը      | 2017<br>թվականի<br>հունվար | փոփոխումը | 2018<br>թվականի<br>հունվար | փոփոխումը | 2017<br>թվականի<br>դեկտեմբեր |
|-------------|-------------|----------------------------|-----------|----------------------------|-----------|------------------------------|
| Արագածոտն   | Աշտարակ     | 116200                     | -5.7%     | 109600                     | 1.5%      | 108000                       |
|             | Ապարան      | 58900                      | 1.9%      | 60000                      | 0.0%      | 60000                        |
|             | Թալին       | 66900                      | -4.3%     | 64000                      | 0.0%      | 64000                        |
| Արարատ      | Արտաշատ     | 99250                      | -8.8%     | 90500                      | -2.8%     | 93100                        |
|             | Մասիս       | 115800                     | -13.8%    | 99850                      | 0.0%      | 99850                        |
|             | Վեդի        | 101750                     | -11.5%    | 90000                      | 0.0%      | 90000                        |
|             | Արարատ      | 77850                      | 2.9%      | 80100                      | 1.4%      | 79000                        |
| Արմավիր     | Վաղարշապատ  | 154200                     | -22.2%    | 120000                     | 1.7%      | 118000                       |
|             | Արմավիր     | 121250                     | -25.8%    | 90000                      | 0.0%      | 90000                        |
|             | Մեծամոր     | 87600                      | -21.1%    | 69100                      | 0.0%      | 69100                        |
| Գեղարքունիք | Սևան        | 99300                      | -18.3%    | 81100                      | -1.3%     | 82200                        |
|             | Գավառ       | 60800                      | -12.8%    | 53000                      | 1.9%      | 52000                        |
|             | Մարտունի    | 107650                     | 2.2%      | 110000                     | 0.0%      | 110000                       |
|             | Վարդենիս    | 45400                      | 1.5%      | 46100                      | 0.0%      | 46100                        |
|             | Ճամբարակ    | 28800                      | 0.0%      | 28800                      | 0.0%      | 28800                        |
| Լոռի        | Վանաձոր     | 88600                      | -13.7%    | 76500                      | 0.0%      | 76500                        |
|             | Ստեփանավան  | 74900                      | -10.5%    | 67000                      | -1.5%     | 68000                        |
|             | Սպիտակ      | 99950                      | -10.0%    | 90000                      | 0.0%      | 90000                        |
|             | Ալավերդի    | 55950                      | -16.0%    | 47000                      | 0.0%      | 47000                        |
|             | Տաշիր       | 47400                      | 0.0%      | 47400                      | 0.0%      | 47400                        |
|             | Թումանյան   | 11000                      | 0.0%      | 11000                      | 0.0%      | 11000                        |
|             | Շամլուղ     | 8000                       | 0.0%      | 8000                       | 0.0%      | 8000                         |
|             | Ախթալա      | 20500                      | 46.3%     | 30000                      | 0.0%      | 30000                        |
| Կոտայք      | Աբովյան     | 155100                     | 1.0%      | 156600                     | 0.0%      | 156600                       |
|             | Նոր Հաճն    | 128500                     | -5.7%     | 121200                     | 0.6%      | 120500                       |
|             | Բյուրեղավան | 108200                     | -13.1%    | 94000                      | -1.6%     | 95500                        |
|             | Եղվարդ      | 110050                     | -0.7%     | 109300                     | 0.0%      | 109300                       |
|             | Հրազդան     | 63900                      | -12.4%    | 56000                      | 0.0%      | 56000                        |
